ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2024թվականի N 878

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37 հոդվածի 3-րդկետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և 37 հոդվածով ***որոշում եմ***

1. Գառնի համայնքի Գեղարդ գյուղից 2.5 կմ հյուսիս-արևմուտք տարածքում «ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ-ն ցանկանում է ընդերքօգտագործման իրավունք ստանալ շուրջ 8 հա մակերեսով ընդերքի տեղամաս շահագործելու նպատակով կազմակերպել հանրային քննարկումներ:

2. Հաստատել Գառնի համայնքի Գեղարդ գյուղից 2.5 կմ հյուսիս-արևմուտք տարածքում «ԿՐՈՒՍՏԱ» ՍՊԸ-ն ցանկանում է ընդերքօգտագործման իրավունք ստանալ շուրջ 8 հա մակերեսով ընդերքի տեղամաս շահագործելու նպատակով կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Գառնի համայնքապետարանի առաջատար մասնագետ Հասմիկ Գրիգորյանին:

4. Հանձնարարել Հասմիկ Գրիգորյանին՝ համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում, և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ, հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը

6. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2024թվականի հուլիսի 11-ի N 836 որոշումը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2024 թ. Հուլիսի 17
գ.Գառնի